ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/37, 05.06.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Սլացք» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասերի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սլացք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 15.05.2019թ. որոշումը և 2-րդ տեղի մասնակցին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
հասցե՝ ք.Երևան, Մելիք Ադամյան 1

Բողոք բերող անձ՝ <<Սլացք>> ՓԲԸ
հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Թևոսյան 3
էլ. հասցե՝ slatsk@mail.ru
հեռ. (+374)-093-116-000

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ,ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3
ծածկագրով բաց մրցույթ,
զանազան պահեստամասերի մատակարարման ձեռքբերում.

Բ Ո Ղ Ո Ք

ՀՀ ՊՆ կողմից զանազան պահեստամասերի մատակարարման ձեռքբերման համար հայտարարվել է ,ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3 ծածկագրով մրցույթ:

Մրցույթի ՊՆ հանձնաժողովի կողմից ցածր գին ներկայացնելու պայմանով ՓԲԸ-ն ճանաչվել է 1 տեղ: Գինը կազմել է 103 146 430.2 դրամ:

Քանի որ ՀՀ ՊՆ պլանով նախատեսված գինը գերազանցել է 70 մլն դրամը, հրավերով պահանջվել է երաշխիք: 1 տեղ ճանաչվելուց հետո ՊՆ հանձնաժողովի կիողմից պահանջվել է ներկայացնել քնօրինակի արտատպված տարբերակը, որն և կատարվել է ՓԲԸ-ի կողմից:

ՊՆ հանձնաժողովի կողմից ստացվել է ծանուցում, որ ,ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգին ,Սլացքե ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի ապահովման գումարը (7251663 ՀՀ դրամ) քիչ է ընթացակարգի հրավերով սահմանված առավելագույն գումարի 5%-ից (7251663,40 ՀՀ դրամ): Ուստի գնահատող հանձնաժողովը 22.05.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված ,Գնումների գործընթացի կազմակերպմանե կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է ,Սլացքե ՓԲԸ-ի ներկայացրած հայտը:

ՓԲԸ-ի կողմից ներկայացված երաշխիքով տրվել է 7 251 663

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N 25443
4 «05» 06 2019

Բանկի կողմից ՓԲԸ-ին տրվել է նաև տեղեկանք, որ գումարը սխալմամբ կլորացվել է դեպի ներքև, բայց պետք է լիներ 7 251 663,40 լումա: Բանկը ՊՆ հանձնաժողովի խնդրել է հիմք ընդունել 7 251 663,40 լումա գումարը:

ՊՆ հանձնաժողովը սխալ է մերժել ՓԲԸ-ի հայտը, որովհետև լուման մեր կարծիքով հաշվարկային միավոր չէ: Բայցևայնպես, Բանկը տվել է տեղեկանք, որ պետք է հիմք ընդունել 7 251 663,40 լումա գումարը: Բանկն է այն երաշխիքի պատասխանատու, և ինքը իրավունք ունի նշել գումարը, քանի որ խախտման ժամանակ հենց բանկն է վճարելու գումարը:

ՓԲԸ-ի կարծիքով գումարը պակաս չի եղել, և այդ պատճառով պետք չէր մերժել ՓԲԸ-ին: 2 տեղ զբաղեցրած մասնակցի գինը էական տարբերվում է ՓԲԸ-ի ներկայացրած գնից և անհասկանալի է պետության համար կարևոր է գնել մատչելի ապրանք, թե 40 լոիմաի համար մերժել և գնել մի քանի միլիոն ավելի թանկ ապրանք:

Գնումների մասին օրենքի 32 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Այստեղից էլ նաև պարզ է դառնում, որ ՓԲԸ-ն որևէ օրենք չի խախտել, իսկ ՊՆ հանձնաժողովը չպետք է մերժեր մեզ:

Հարգելի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, խնդրում եմ Ձեզ, հաշցի առեք ՓԲԸ-ի կողմից նշված հանգամանքները և Գնումների մասին օրենքի 50 կետի համաձայն՝ պարտավորեցրեք չեղյալ հայտարարել ՊՆ հանձնաժողովի կողմից ,Սլացքե ՓԲԸ-ի ներկայացրած հայտը մերժելու 2019 թվականի մայիսի 15-ին որոշումը և 2 տեղի մասնակցին 1 տեղ ճանաչելու որոշումը:

Ներկայացնում ենք բողոքի վճարի և բանկի կողմից ներկայացված երաշխիքի ու տեղեկանքի օրինակները:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքով՝

Ա. Ահարոնյան

տնօրեն՝

«ՍԼԱՑՔ»
«СЛАЦК»
06901582